

ման համար քան զայս աւելի նպաստաւոր պարագայ չէր կրնար ըլլալ, թագուհեաց մեծ մասն՝ որոնց խնայեր էր կարճատե մեղմ եղանակն ձմե-

րուան՝ շատ շուտ սկսելով հաւկիթածել, երբովիդ ամէն կողմը ողողեցին պիծակաց խմբերով:

Հարադի-Լագրաց.

## Գ Ի Շ Ե Ր Ա Վ Ա Ր \*

— \* —

(Ըստ համիլոոսի Փրամարիոնի)

**Զ**այս մէկը որ չզարմանայ այս օր երս երկնից երկու պայծառագեղ աստեղաց վրայ, որ կը փայլին արեգական մտնելու ժամանակներ, և կը գերազանցեն իրենց լուսոյ պայծառութեամբ հաստատութեան մէջ գոտուող միւս ընկերներէն: Ասոնց գեղեցկագոյնն և լուսաղբագոյնն կը փալփայ հարաւար արևմտեան կողմը, և իւր ընթացքովն արևուն կը հետեւ երեք ժամ հեռաւորութեամբ: սա Գիշերավար է աստղ հովուի, լուսաւորագոյնն ի մելորակս:

Իւր պայծառութիւնն օրուան լուսոյ կը յաղթէ և սրատեպք ամսէ ի վեր կարող էին նկատել այն շողղողուն կէտը կէս օր իսկ երկնիքի կապուտակի վրայ: Երեկունը միժնաշաղ կու տայ, ինչպէս լուսին իւր նուազ պայծառութեան ժամանակ:

Միւս աստղը կը մրցի գիշերավարի

հետ առանցիրեն հաւասարելու՝ կ'երեկի ի յելս հարաւոյ և գիշերն ի հարաւ կը յառաջէ մեծ հեռաւորութեամբ դէպ ի երեկոյեան աստեղ ձախ կողմը: իւր լոյսը աւելի ալիսորժելի է, աւելի յըստակ, նուազ կենդանի: սա է լուսընթագ՝ մեր գրութեան հսկայ գունաը: Այս երկու աստեղը իրարուկը հետևին եօթն ժամ հեռաւորութեամբ, մեր շուրջ բոլորեղով երկնային գունոտի առերևոյթ օրական շարժմամբ:

Աստեղազարդ կամարի սոյն երկու ադամանդք կը շացնեն մարդուս աշքը՝ այլ չեն լուսաւորեր անոր հոգին, որզուրկ է աստեղագիտութենէ, և յերկինս կը նայի առանց զայն ճանճնալու:

Հրաշալի տեսարան մ'է այդ՝ որ կրնայ մեր միտքը յերեկակյեալ աշխարհը փոխադրել, և վայրիկ մի վերացնել սրտերը ռամկական գաղափարներէ: բայց սոյն տեսարանը չ'ըն-

\* Մեր մէջ Գիշերավար կը կոչուի՝ գիշեր երեկուն համար, Արտսեակ՝ արևէն առաջ ծագելուն համար: — Փետրուար 16ին առաւտեան իններորդ ժամուն անցաւ Գիշերավան արեւուն և երկրիս միջավ, բայց արևէն 8 առաջինճանէն առակա մի բարձր, որ է ըսել լուսնի տրամադին 17 անգամ լացնութեամբ: և այս անցամանի վերջ մինչև ցարդ գիշերավան՝ յարուսեակ փոխուեցաւ: Անցնելէն մի քանի որ առաջ փետրուարի 9էն սկսալ մինչև 18՝ նոյնն գիշերավար և արուսեակ էր միանգամայն: (արուսեակն սովորական աշքը կը տեսնուին արեւուն ծագելէն 20 վայրկեան ոչ պակաս յաւաջ և կամ մըտ-

նելէն վերջ նոյն շափով): արդ 9ին ծագելով արեգակն 22 վայրկեան առաջ իր արուսեակ, և արեւուն մոնելէն վերջ 1ժ 24վ երեկոյի իր գիշերավար: այսպէս օրէ օր փոխուելով, այսինքն առաւտեն ելքը կանելելով 4իլ: և երեկոյին՝ մուտքը 9վ. Փետրուար 14ին ծագեցաւ արևէն 43վ առաջ և մուա 43վ յետոյ, որ է ըսել բուն նոյն օրն ճշշ նոյնշափ ժամանակ թէ արուսեակ և թէ գիշերավար եղաւ: իսկ 17ին վերացաւ իւր գիշերավարութիւնն: Այս անգամը պէս գեղցիքի երեսցի հազիր երբեք դարեր առաջ պատահեր է և շատ ժամանակ պէտք է՝ որ նոյնն կրկնուի:

ծայեր մեզի այն հրապոյրը գոր պիտի զգանք, երբ տեղեկանալք՝ թէ այդ անրաւութեան մէջ սփոռուած փայրուն կէտերն իրապէս ի՞նչ կը ներկայացնեն.

Աստղիկ կամ Գիշերավար՝ արեմբաւան սպիտակ աստղը, այլ ևս չէ երկնային լոյս մը՝ նշանակ խոկման և սիրոյ, որ կը հրաւիրէր զսիրտս ի համանջութիւն, հոչակիչ գեղեցկութեան, ինամնակալ գաղտնեաց: Արամազդ կամ լուսնթագ աստղ՝ չէ այլ ևս գերագոյնն ի գից վերին զնտերու, և ուղղիչ բնութեան: Մ'եր միտքն ուս սումբական գիւտերով հրահանգեալ և առերևեցթ պատրուակէն անդին անցնելով, կը ճանչնայ այս երկու անջօշափելի լուսերու մէջ, մեր բնակածին նման աշխարհներ, որք մեզ նման կը դառնան արեւու շուրջը՝ նոյն ձգողութեամբ, զուրկի ի սեպհական լուսաց, կեդրոնական աստղէ ընդունելով լոյսը ի միջոցի ցողացուցիչ, և մեր գնտոյն նման ունակ յաջորդութեան զարերու, տարիներու, օրերու և ժամերու: Աշխարհ՝ մերինին նման՝ բայց ոչ նոյն, և տարբերութիւնն մեծ:

\* \*

Գիշերավարն բոլորովին նման երկրիս կ'երեսի, թէ տարածութեամբ և թէ խտութեամբ: իւր տրամագիծը մեր երկրագնատին գրեթէ հաւասարէ: նոյնը կրնակը ըսել նկատմամբ կշռոյն և միջին խտութեան այն նիւթոց, յորոց կազմուած է, և մակերեսութին վրայ կրած ծանրութեան: Այս անինայն ճշգիւ չափուած է: Գիւտերէ նաև որ այս մնորակս շըրջապատեալ է աւելի բարձր և աւելի խիտ միջնորդտէ և գրեթէ թանձր և ծածկեալ ամսերէ: Արուսեկի մեծ պայծառութեան պատճառն է իւր արեգական մերձ լինելն, որով ամսկոց մակերևոյթը կրանչելապէս կը ճառագայթէ առ մեզ արեւուն լոյսը: Մա երկրիս պէս անթափանց է, արեւութուաէն զատ՝ այլ լոյս չունի:

Տկար հեռագիտակ մ'իսկ բաւական է ցուցանել բիծերն նման լուսնի. երկրս գիտերով հեռուէն, զոր օրինակ Հրատէն, ճիշտ մի և նոյն երեսիթ կ'ընծայէ մեզ՝ ինչ որ Արուսեակ: մենք Հրատի բնակաց համար հովուի սպիտակ աստղ եւկ (և թերևս մեզ համար իսկ սեղաններ կանգնած են):

Մ'եծագոյն տարբերութիւն ի մէջ երկրիս և արուսեկին (արբանեակ չունի) իրենց արևէն ունեցած հեռութեան և տարլուց երկարութեան մէջ կը կանանայ:

Մ'ինչդեռ մեր մոլորակն արեգակէն 14900 բիւր հազարամետր հեռութեամբ կը շըջի, և 865 օրուան մէջ կը կատուարէ իւր տարեկան թաւալումն, իւր երկնային ընկերը 10,800 բիւր հազարաշափ հեռի է նոյն կեդրոնէն և տարբեկան թաւալումն 224 օրուան մէջ կը լրացնէ կամ թէ 7 ու կէս ամիս:

Դարձեալ միւս կողմանէ արևէն ընդունած լոյսը և ջերմութիւնն, մեր գնտէս շատ աւելի է, գրեթէ 19առ.10 համեմատութեամբ: Դժբաղդաբար ստոյդ չենք գիտեր արուսեկի օրական թաւալումն, և ոչ այլ իւր առանցքին հակումն, այնպէս որ անծանօթ է մեզ իւր տունջեան և գիշերոյ տեղութիւնն: և իւր եղանակաց սասակութիւնն մակերեսութին վրայ: Արդ իսկ շատ տարի չէ որ մեր ծանօթութիւնները համեմատաբար ըստ բաւականին ստուգեցան Մ'երգիուանու հոչականուն Սքիապարելեաց նոր քննութեամբք: Արուսեկի երեկին աստեղապիտաց համար լաւ ուսումնասիրութեան առիթ մ'է:

Եւ սակայն այսպիսի անստուգութիւն մի բնաւ արգելք չըլլար մեզ, լուսնէն յետոյ երկրիս մերձաւորագոյն եղող այս գունտալը նկատել, ըստ որում աւելի ուշագրաւ նմանութիւն ունի երկրիս հեռ, և հաւասականաբար բընակելի է մեզմէ քիչ տարբեր մարդ-

կային ցեղէ մի , Դիտելով իրիկունը այս գունսու այսպէս փայլուն երկնից վրայ , կրնանք երևակոյել թէ գտուին անդ էակ գործօնեայ , հաղորդ ամենայն գործոյ , կենցազավարութեան և քաղաքականութեան , ժողովուրդք՝ նման բարելացւոց , Թիերացւոց , Պարիսեցւոց և Հռովմայեցւոց , միով բանիւ մարդիկ՝ որ նոյն են Արուսեկի համար , ինչ որ մենք երկրիս , զանազան բնաբանական կերպարանգք ,

այլ անտարակոյս ճոխացեալ նոյն աըրամարանական սկզբամբք՝ որով կը վարեն մեր խորհուրդք . թէպէտ իրենց ճանաշողութեան եղանակք կընան մերինեն յոյժ տարբերիլ :

Թերեւս նոքա աւելի շուտով ելեր են բարբարոսական շրջանակէն և այն մերձակայ երկրի վրայ ձեւացնեն ընկերութիւն մի իմացական , լուսաւոր , խաղաղ և եղբայրական , ճանաշող գեղցցկին , ճշմարտին և բարւոյն :

### ՑՈՒՑԱԿ ԶԱՆՍՉԱՆ ԵՐԱԳՈՒԹԵԱՆՑ

#### ՄԵՏՐԱԿԱՆ ԶԱՓՈՎ ՄԱՆՐԵՐԻ ՄԱՆՐԵՐԻ ՄԻ ՄԵՋ

(Տես յէջ 94)

Անկումն մարմոյ լուսնթագի վրայ յետ մի մանրերկրորդ անկման . . . . .	24, 47
Բարակ շան ընթացք . . . . .	25, 84
Երագլնթաց շոգեկառք որ ժամու մէջ կընէ 60 անդղիա- կան մղոն (60×1609 , մետր 3) . . . . .	26, 82
Թռիչ ուղեգնաց աղաւնոյ . . . . .	27
Թռիչ բաղէի . . . . .	28
Թռիչ արծւոյ . . . . .	31
Ովկիանու մէջ պստող մրրիկ . . . . .	25, 40
Ծայրագոյն երագութիւնն սմբակի ձիոյ , որ քառատրոփ կ'սատնու (18 մետր 718 մէկ մանրերկրորդի մէջ) .	46, 10
Մրրիկ որ ծառերն արմատախիւ կ'ընէ . . . . .	45
Մեծ կոհակ ովկիանոսի մէջ . . . . .	45, 83
Ճեսական երագութիւնն շոգեշարժ մեքենայի մեծանուց (vo- lant) շրջապատին . . . . .	52, 50
Ճեղափոխութիւնն փոթորկի 1884 , 24 Սեպ . 194 հաղարա մետր 4 ժամու մէջ . . . . .	54, 17
Անկումն ասուպի երկրիս վրայ՝ որոյ ծանրութիւն է 4 հազ- րագրամ գնտաձև . . . . .	60
Թռիչ ծիծուան . . . . .	67
Անկումն մարմոյ երկրիս վրայ յետ 300 մետր անկման .	76, 72
Թռիչ Մաքալուկի (Martinet) . . . . .	88, 90
Լուսնթագի մինոլորտի շարժումն (հասարակածի սպիտակ բիծերու) . . . . .	128, 17